ԱՐՑԱԽԵԱՆ ՕՐԱԳԻՐ

Ապրիլ ամսուայ առաջին օրերին Արցախում պահպանուեց լարուած իրավիճակը, որ վերջին շրջանում կրկին սրուել էր։ Զինուած առճակատումները աւելի կատաղի եւ լայնամասշտաբ բնոյթ ընդունեցին յատկապէս Գետաշէնի եւ Բերդաձորի ենթաշրջաններում։

Ապրիլի 5ին ստացուած հաղորդագրութիւններում ասւում է. «Գետաշէն եւ Մարտունաշէն գիւղերը շարունակում են գտնուել անընդհատ յարձակումների օղակի մէջ։ Շրջապատման մէջ գտնուող Գետաշէնի ճանապարհները ականապատուած են եւ Շահումեանի կողմից օգնութեան ոչ մի հնարաւորութիւն չկայ։ Միակ կապն արտաքին աշխարհի հետ իրականացւում է ուղղաթիռներով։ Ականանետերի հարուածներից բանդուել են մի քանի տներ։ Կայ մէկ վիրաւոր, սպանուել է Մարտիրոս Շահնազարեանը։ Ադրբեջանական պաշտօնական աղբիւրների հաղորդումների համաձայն, ազերիները միջոցառումներ են ձեռնարկում լրացուցիչ ՕՄՕՆի ուժեր Արցախ տեղափոխելու ուղղութեամբ»։

Ապրիլի 5ին ՀՀ ՆԳ նախարարի պաշտօնակատար Աշոտ Մանուչարեանը հեռագրեր է ուղարկել ԽՍՀՄ ՆԳՆ օպերատիւ շտաբին, Ադրբեջանի ՆԳ նախարար Տ.Ասադովին, ուր ասում է. «Այս տարուայ Ապրիլի 4ին ժամը 8.30ից մինչեւ Ապրիլի 5ի ժամը 1.30ը Թովուզի շրջանի Ալիբէյլի գիւղի կողմից ականանետից եւ ինքնաձիգ հրազէնից պարբերաբար գնդակոծուել է Հայաստանի Տաւուշի շրջանին եւ Այգեպատ գիւղին յարող տարածքները։

Ապրիլի 3ին ժամը 18.00ին Ղազախի շրջանի Ակսիպար գիւղի կողմից ինքնաձիգ հրազէնից գնդակոծուել է Իջեւանի շրջանի Բերքաբեր գիւղի դաշտում աշխատող տրակտորը։ Տուժածներ չկան։

Ապրիլի 4ին ժամը 17.50ին Ղազախի շրջանի Բարխուդարլի գիւղում տեղակայուած 31749 զինմասի զինծառայողներ Մորոզովը եւ Կիրեակը հարբած վիճակում 373 համարի Տ-62 տանկով ներխուժել են Իջեւանի շրջանի Ազատամուտ գիւղի տարածքը, ընկուզենիների տնկարանում մի քանի ծառ տապալելով՝ կրակ են բացել գիւղի վրայ։ Տանկը զինծառայողների հետ միասին վերադարձուել է ծառայութեան վայր։

Ապրիլի 4ին ժամը 23.30ին Ադրբեջանի Ղազախի շրջանի Ներքին Ակսիպար գիւղից ներքին գործերի շրջանային բաժանմունքի միլիցիաները ինքնաձիգով 20 ռոպէ կրակել են Հայաստանի Նոյեմբերեանի շրջանի Ոսկեպար գիւղի միլիցիայի պահակակէտի վրայ։ Պատասխան կրակ չի եղել։ Տուժածներ չկան»։

Հեռագիրն ուղարկուել էր ի պատասխան Ապրիլի 4ին «Կոմսոմոլսկայա պրաւդա» թերթում տպագրուած ԽՍՀՄ ՆԳՆ այն հաղորդագրութեան, ըստ որի իբր թէ այդ օրերին 70 հայ զրոհայիններ կրակ էին բացել Ադրբեջանի Ղազախի շրջանի Ակսիպար գիւղի տարածքում գտնուող խորհրդային զօրամասերից մէկի պահակակէտի վրայ։ Ըստ ստացող հաղորդագրութեան, զոհուել էին 15 զրոհայիններ, առգրաւուել էին «Մոսկովիչ» եւ «Նիւա» մակնիշի մեքենաներ, ինչպէս եւ զրահապատուած հանրակառք։ Հաղորդագրութեան մէջ նշուած էր նաեւ, որ վիրաւորուել է վաշտի հրամանատար լեյտենանտ Դուշանալիեւը։

Ինչպէս հետագայում ճշտուեց, յարձակումը կատարուել էր ազե-

ԱՐՑԱԽԵԱՆ ՕՐԱԳԻՐ

Սկիզբը էջ 12

րիների կողմից։

Ապրիլի 7-8ին Գորիս-Ղափան ճանապարհի վրայ ազերիները յարձակումներ են գործել անցնող մեքենաների վրայ։ Ապրիլի 8ի վաղ առաւօտեան, նման յարձակման ժամանակ, հայկական ինքնապաշտպանութեան ջոկատները բախուել են յարձակուողների հետ Շուռնուխ եւ Որոտան գիւղերի շրջակայքում։ Հայերից կան 5 վիրաւորներ, իսկ ազերիներից՝ սպանուածներ։ Դէպքից յետոյ Գորիս-Ղափան ճանապարհը փակուեց։ Այնուհետեւ բանակցութիւններ սկսուեցին ընդհարումները դադարեցնելու նպատակով։

Ապրիլի 3ին ժամը 10.20ին Շուշիի շրջանի Թուրսուսու բնակավայրի մօտակայքում վթարի է ենթարկուել ՄԻ-8 ուղղաթիռը, որի մէջ գտնուել են Ադրբեջանի մի խումբ պատասխանատու աշխատողներ, պատգամաւորներ, Շուշիի շրջխորհրդի նախագահը, Ներքին գործերի նախարարի տեղակալ Եուսուֆովը։ Ըստ պաշտօնական հաղորդագրութեան, զոհեր չկան։ Յայտնի է, որ վթարը տեղի է ունեցել ուղղաթիռի մէջ առաջացած հրդեհի պատճառով։

Միաժամանակ, Ադրբեջանի ներքին կեանքում տեղի են ունենում խմորումներ, որոնք ոչ երկրորդական ազդեցութիւն են ունենում եւ ունենալու են ապագայում անմիջականօրէն արցախեան մարզի վրայ։ Ամրապնդուող տարբեր քաղաքական կազմակերպութիւնների մօտ աճում է դժգոհութիւնը Ադրբեջանի ողջ տարածքում պահպանուող յատուկ դրութեան, կոմունիստական վարչակարգի հանդէպ։

Անցած ՈՒրբաթ կամ Շաբաթ օրերը Աղդամ քաղաքում տեղի ունեցաւ Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի հանդիպումը ԼՂԻՄի սահմանակից ադրբեջանական շրջանների ղեկավարութեան հետ։

Ապրիլի 9ին Ստեփանակերտ այցելեց ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարի առաջին տեղակալ զօրավար Գրոմովը։ Այցն ընթանում էր գաղտնի, յայտնի է միայն, որ Ստեփանակերտում նա երկարատեւ խորհրդակցութիւն ունեցաւ այսպէս կոչուած «հանրապետական կազմկոմիտէի» եւ ԼՂԻՄի իրաւապահ մարմինների պատասխանատու գործիչների հետ։ Նշենք նաեւ, որ Մարզի կուսակցական ղեկավար Հրանտ Մելքոնեանը չի ցանկացել հանդիպել Գրոմովի հետ, որը նոյն օրը երեկոյան ժամը 19ին վերադարձել է Մոսկուա։

Ենթադրւում է, որ այս հանդիպումները հետապնդում են մարզում «կայունութիւն» հաստատելու նպատակը։ Նշենք, որ կայունութեան անուան տակ Մոսկուան ու Բաքուն հասկանում են մինչ 88 թուականի վիճակի վերականգնումը։

Ինչպէս հաղորդում է Բաքուի ռադիոն, «Հայաք» թերթում տպագրուել է մի թղթակցութիւն այն մասին, որ Ապրիլի 9ին Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան Սադարակի եւ Հայաստանի Արարատի շրջանների սահմանակէտում տեղի է ունեցել երկկողմեայ ներկայացուցիչների հանդիպում։ Հանդիպմանը մասնակցել են Սադարակի շրջխորհրդի նախագահ, կուսշրջկոմի առաջին քարտուղար Քյազիմովը, վարչական մարմինների եւ հասարակական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ, հայկական կողմից՝ Արարատի շրջխորհրդի նախագահը, Արարատի քաղգործկոմի նախագահը, ՀՀԳԽ մի պատգամաւոր, եւ այլ անձինք։ Հանդիպման ժամանակ նշուեց, որ վերջին տարիներին տեղի ունեցած իրադարձութիւնները բարոյաքաղաքական տեսակէտից բացասական ազդեցութիւն են գործել թէ Շարուրիի, թէ Սադարակի, թէ Արարատի շրջաններում, պատճառ դարձել տնտեսական իրավիճակի վատթարացման։ Հանդիպման մասնակիցները քննարկեցին իրադրութեան կարգաւորման ուղիները, համաձայնութիւն յայտնեցին փոխադարձ կապերի, յատկապէս առեւտրական կապերի վերականգնման հարցում, առանձնապէս ընդգծուեց, որ առճակատումը ձեռնտու չէ եւ ոչ մի կողմին։ Լուրջ խօսակցութիւն ծաւալուեց Սադարակի շրջանի Քյարքի գիւղը յետ վերադարձնելու շուրջ։ Կողմերը պայմանաւորուեցին կազմակերպել լրացուցիչ հանդիպում։